# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
## 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի
## ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 25-ին ժամը 16:00-ին քաղաք Էջմիածին, Մր. Մ. Մաշտոցի 0 հասցեում գտնվող Վաղարշապատի համայնքապետարանի վարչականի շենքի առաջին հարկի ավագանու նիստերի դահլիճում հրավիրվել է Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստը, որին մասնակցելու համար չի ներկայացել Վաղարշապատ համայնքի ավագանու որևէ անդամ, այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը՝ հիմք ընդունելով գրանցման արդյունքները:

Վաղարշապատ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստին ներկա են համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Սմբատյանը:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավիրված ավագանու նիստին օրենքով սահմանված կարգով կես ժամվա ընթացքում չի ներկայացել նիստ վարողը՝ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը և ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ուստի նիստը իրավազոր չէ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդված 3-րդ մասով՝ նիստը համարվում է չկայացած:

Ավագանու նիստն ավարտվեց 2025 թվականի հունիսի 25-ին ժամը 16:30-ին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ Կ. ՍՄԲԱՏՅԱՆ